# Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն
**05 մարտի 2014 թ.**
Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ III Ծրագիր
Պայմանագիր # GQ-057
Վարկ No IDA -50710-AM
Լրացուցիչ ֆինանսավորում III

## GQ-057, Ճամբարակի առողջության կենտրոնի ՓԲԸ շենքի հիմնանորոգման ավարտ

1. Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամ (ՀՍՆՀ) III Ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությունը Միջազգային Զարգացման Ընկերակցությունից ստացել է վարկ և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը **GQ-057, Ճամբարակի առողջության կենտրոնի ՓԲԸ շենքի հիմնանորոգման ավարտման** վավերացված վճարումները կատարելու համար:

2. Պատվիրատուն՝ **Ճամբարակի առողջության կենտրոնի ՓԲԸ շենքի հիմնանորոգման ավարտման** ծրագիրն իրականացնող կոմիտեն, որը համաձայնագիր է կնքել ՀՍՆՀ-ի հետ, իրավասու և որակավորված հայտատուներին հրավիրում է ներկայացնելու մրցութային հայտերի կնքված փաթեթներ **Ճամբարակի առողջության կենտրոնի ՓԲԸ շենքի հիմնանորոգման ավարտման** աշխատանքներն իրականացնելու համար: Շինարարության տևողությունը 100 օրացուցային օր:

3. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցում (Procurement of Goods, Works, and Non-Consalting Services under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011) սահմանված ազգային մրցույթի ընթացակարգով և, ինչպես նշված է մրցութային փաստաթղթերում, բաց է բոլոր իրավասու հայտատուների համար:

4. Որակավորման պահանջները ներառում են՝ ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում կատարված 469,000,000 դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու քաղաքացիական շենքերի հիմնանորոգման պայմանագրեր: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի 103.000.000 ՀՀ դրամից, գ/ նվազագույնը 77,000,000 դրամի դյուրիրացվելի միջոցներ և/կամ

վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված **«Քաղաքացիական»** լիցենզիաներ:

5. Շահագրգիռ հայտատուները մրցութային փաթեթը հայերեն լեզվով կարող են ստանալ ՀՄՆՀ գրասենյակից՝ Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ, Ջեռքբերումների վարչություն հասցեում, ժամը 10:00 մինչև 17:00, յուրաքանչյուր փաթեթի համար վճարելով 2,500 դրամ: Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ վերոնշյալ հասցեում:

6. Հայտերի վավերականության ժամկետը կկազմի **60** օր հայտերի բացման պահից և բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն մրցութային հայտի ապահովման հայտարարագրով:

7. Հայտերի ներկայացման հասցեն՝ **Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Տիգրան Մեծի 17 /Առողջության կենտրոն/:** Հայտերը կբացվեն **2014 թ. ապրիլի 04-ին**, ժամը **14:00-ին** այն մասնակիցների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել: Փաթեթների ներկայացումը էլեկտրոնային եղանակով չի թույլատրվում:

8. Ուշացված հայտերը չեն ընդունվում և առանց բացելու վերադարձվում են հայտատուին: